ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1 սեպտեմբերի 2016 թվականի N117-Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ՇՏԱՊ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ ՆՇՎԱԾ ՈԼՈՐՏՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և 1.17 կետի ա) ենթակետով, ***կարգադրում եմ՝***

1. ՀՀ Սյունիքի մարզի բժշկական կենտրոններում շտապ օգնության ծառայությունների կողմից մատուցված բժշկական օգնության և սպասարկման որակը և նշված ոլորտում ֆինանսատնտեսական գործունեությունն ուսումնասիրելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

Հովհաննիսյան Հարություն - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ,խմբի ղեկավար

Գևորգյան Նունե - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ,

Ասրյան Աշոտ - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ:

2. Հանձնաժողովին՝ կատարված ուսումնասիրությունների վերաբերյալ քսանօրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2016թ. Սեպտեմբերի 1
ք. Կապան